



05/13461-17
1/05.2/11277-17

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 1149 ա/վ

«06» 10 2017 թ.

ք.Երևան

**ԼԵՎՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ
ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 111-րդ հոդվածի 2-րդ կետով և 130-րդ հոդվածի 1-ին մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 3-ի 259-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի 16-րդ կետի 4-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Լուծել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ ՀՀ ԱԻՆ) «Հիդրոօդերկութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Հիդրոմետ ծառայություն) տնօրեն Լևոն Վարդանյանի հետ 2014 թվականի հոկտեմբերի 8-ին կնքված աշխատանքային պայմանագիրը ս. թ. հոկտեմբերի 8-ից:
2. ՀՀ ԱԻՆ Հիդրոմետ ծառայության տնօրենի պարտականությունների ժամանակավոր կատարումը դնել ՀՀ ԱԻՆ Հիդրոմետ ծառայության տնօրենի տեղակալ Արմեն Դպիրյանի վրա:
3. ՀՀ ԱԻՆ Հիդրոմետ ծառայության գլխավոր հաշվապահին՝ կատարել վերջնահաշվարկ օրենքով սահմանված կարգով:
4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Դ. ՏՈՆՈՅԱՆ

Sign